

Վերջին տասնամյակները առանձնացան մասնավոր հատվածին բնորոշ գործելաճոճի փոխառմամբ հանրային կառավարման ոլորտում: Պետական և մասնավոր հատվածների միջև սահմանները արագ տարրալուծվում են, անջատ գործառնության կառույցներին փոխարինելու են գալիս գործընկերային ցանցերը տարբեր ինստիտուտների միջև:

Մոտեցումների համատեղման առավել տարածված ձևը դարձավ **հանրային (պետական) - մասնավոր համագործակցություն հասկացությունը (ՊՄՀ): ՊՄՀ ելությունը հանգում է պետության և մասնավոր հատվածի կողմից հավասարության սկզբունքով այնպիսի ծրագրերի համատեղ իրականացմանը, որոնք ունեն հանրային արգասիք, ապահովում են եկամուտ, ստեղծում հանրային արժեք և առավել հավանական են հենց երկուստեք ներգրավման դեպքում:**

Տնտեսագետները պետական-մասնավոր համագործակցությունը դիտում են որպես ապակենտրոնացման ու մասնավորեցման այլընտրանք: Այն համագործակցության այնպիսի տեսակ է, որը հնարավորություն է տալիս իրացնել մասնավոր կողմի շահերն ու հնարավորությունները կոնկրետ ոլորտում՝ մի կողմից և ապահայանել պետական վերահսկողությունը՝ մյուս կողմից: Պետությունը պատասխանատվություն է կրում հանրային բարիքների ստեղծման ու անխափան մատակարարման համար, այդ իսկ պատճառով ձգտում է պահպանել վերահսկողությունը դրանց ապահովման նկատմամբ:

Մյուս մոտեցումը պատկանում է հանրային կառավարմանը, որի համաձայն՝ ՊՄՀ-ն ո՛չ մասնավորեցման, ո՛չ էլ ազգայնացման ձև է, այլ պետության հանրային պարտավորությունների օպտիմալացման ձև՝ ուղղված հանրային բարիքների և ծառայությունների ապահովմանը՝:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը պաշտոնական փոստաթղթերում գործածում է պետական-մասնավոր համագործակցության հետևյալ սահմանումը. «Պետական-մասնավոր համագործակցությունը ամեն տեսակի պաշտոնական հարաբերություններ ու պայմանագրեր են, որ կազմված են պետության և մասնավոր գործընկերների միջև՝ կոնկրետ կամ չամրագրված ժամանակահատվածի համար, և որոնց շրջանակում կողմերը փոխգործակցում են որոշումների ընդունման գործընթացում ու երկ-կողմանի ներդրումներ են կատարում (փող, անձնակազմ, սարքավորումներ, տեղեկատվություն)՝ կոնկրետ ոլորտում կոնկրետ նպատակներին համատեղ հասնելու համար»:

Կարելի է ասել, որ առավել նախընտրելի է պետական-մասնավոր գործընկերությունը դիտարկել ու գնահատել որպես փոխկանոնակարգման հարաբերություն: Դա նշանակում է պետության և բիզնեսի միջև այն հարաբերությունների համատեղ նորմավորում, կանոնակարգում, որոնք ենթադրում են պետության կողմից որոշ գործառնությունների փոխանցում բիզնեսին՝ միասին իրականացվող ծրագրերում: Օրինակ՝ ծառայության մատուցման ծրագրում համատեղ մշակվող չափանիշները վերաբերում են վերջնական արդյունքին, իսկ դրանց հասնելուն ուղղված աշխատանքներում մասնավոր կողմին տրվում է ընթացիկ վերանայման հնարավորություն: Ծրագրե-

րը սկզբունքային մակարդակով հիմնվում են մի կողմից երկու կողմի ռեսուրսների ու ներուժի միավորման, մյուս կողմից՝ ռիսկերի և պարտավորությունների բաժանման վրա՝:

Ընդունված է համարել, որ մասնավոր հատվածը ավելի արդյունավետ է իր գործունեության մեջ, քան պետականը: Անցումային երկրներում պետական հատվածները, զարգացած երկրների համեմատ, չեն առանձնանում արդյունավետությամբ: Հանրային շատ ծառայություններ անցումային երկրներում պետական հատվածում են ինտեգրացվում, մինչդեռ մասնավոր կառավարման դեպքում կգործեն ավելի արդյունավետ: Այսպիսով՝ հատկապես զարգացող երկրներում, պետական կողմը տնտեսության շատ հատվածներում կա ավելի շուտ ավանդույթի, հանրային կարծիքի, ուժի, անվտանգության, բայց ոչ կարողությունների և արժեք ավելացնելու հիմքով:

Գոյություն ունեն մասնավոր-պետական համագործակցության կազմակերպման մի շարք մոտեցումներ: Մեծ Բրիտանիայում մշակվել է կոնցեսիոն պայմանագրերի դասակարգման համակարգ, այսպես կոչված՝ BOOT սխեմաները: Անգլերենից թարգմանաբար BOOT- build- կառուցել, own- տիրապետել, operate- կառավարել, transfer- փոխանցել, BOT- կառուցել, կառավարել, փոխանցել, BOO-կառուցել, տիրապետել, կառավարել և այսպես կոչված՝ հակադարձ BOOT-ը, որի դեպքում արդեն պետությունն է կառուցում օբյեկտը և այն փոխանցում մասնավոր ընկերության տնօրինմանը, հնարավոր է նաև լիարժեք փոխանցում աստիճանական կարգով: Առավել տարածված են առաջին և երկրորդ տարբերակները:

Ներդրումային գրավչությունը պետության կողմից ևս ապահովվում է ընդունված մի քանի սխեմայով, ըստ որի՝ մի դեպքում պետությունը ներդրված գումարները վերադարձնում է մասնավոր հատվածին ապառիկ կարգով, և երկրորդ դեպքում՝ ներդրողը վերադարձնում է գումարը օբյեկտի շահագործման հաշվին: Երրորդ տարբերակում գումարները վերադարձվում են առաջին ու երկրորդ տարբերակների համարման արդյունքում:

Վերջին շրջանում, հատկապես զարգացող երկրներում, ներդրումների ներգրավման միջոց են դարձել այսպես կոչված փաթեթային կոնցեսիաները, որոնց դեպքում պետությունը առաջարկում է իրար հետ կապ ունեցող միանգամից մի քանի կոնցեսիա: Օրինակ՝ օդանավակայանի կամ ծովային նավահանգստի հետ մեկտեղ, առաջարկվում է նաև դեպի այն տա-նող ճանապարհի և այլ ենթակառուցվածքի կոնցեսիա: Նման դեպքում մեծանում է ներդրումների ընդհանուր իրացվելիությունը: Օգտագործվում է նաև այլ տարբերակ, որի ելությունը ենթակառուցվածքային մեծ ծրագրի հարակից հատվածի անհատույց տրամադրումն է կոնցեսիոններին: Օրինակ՝ օդանավակայանի և ճանապարհի կառուցման դիմաց կոնցեսիոններին է տրամադրվում ճանապարհի հարակից տարածքը, որը մտնում է իր սեփականության տակ նաև կոնցեսիոն պայմանագրի ավարտից հետո: Նման միջոցներ օգտագործվում են նոր տարածքների իրացման դեպքում: Չարգացող երկրներում բարձր ռիսկերի պատճառով դեռևս ձեռավորվում է երկարա-ժամկետ ՊՄՀ-ների ավանդույթը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ատենախոսության թեմա՝
Բիզնես-պետություն
միջնակարգի փոխգործակցության
հիմնահարցերը
ՀՀ տնտեսությունում
Գիտական ղեկավար՝
Հայկ ՍՄՐԳՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Երիկ
ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ
ՀՀ
պետական
կառավարման
ակադեմիայի
ասպիրանտ



ՊՄՀ հիմնական մոդելները՝ ըստ ֆինանսավորման, կազմակերպական կառուցվածքի եւ համագործակցության ձևի⁵

Մոդելի տիպը	Սեփականության ձևը	Կառավարումը	Ծախսերի ֆինանսավորումը
Կառավարվող	պետական	մասնավոր	պետական/մասնավոր
Կոոպերացիոն	մասնավոր/պետական	մասնավոր/պետական	մասնավոր/պետական
Կոնցեսիոն	պետական	մասնավոր/պետական	մասնավոր/պետական
Պայմանագրային	մասնավոր/պետական	մասնավոր	մասնավոր
Լիզինգային	մասնավոր	մասնավոր/պետական	մասնավոր/պետական

Պետական-մասնավոր փոխգործակցության ձևերից է նաեւ համատեղ արտադրանքի, օրինակ՝ օգտակար հասածուների բաժանման, մասին պայմանագիրը:

Մասնավոր եւ հանրային հատվածի համագործակցության արդյունքները կարելի է ներկայացնել երեք մակարդակով: Դրանք ուղղակի ազդեցության արդյունքներն են, որ նախատեսված էին ծրագրով, ազդեցությունը կողմերի հնարավորությունների ընդլայնման, հմտությունների զարգացման եւ վարկանիշային կապիտալի վրա, ինչպես նաեւ ազդեցությունը տվյալ ոլորտում ընդհանուր քաղաքականության եւ համակարգի փոփոխման առումով:

Որոշակի ընդհանրացմամբ՝ պետական-մասնավոր փոխհամագործակցության գործողությունների ծրագիր մշակելիս կողմերը անցնում են հետեւյալ փուլերով.

- պայմանագրում կարելու է հստակեցնել ռիսկերի բաշխման սկզբունքները,
- կողմերն իրենց գնային հաշվարկները միմյանց ներկայացնում են միաժամանակ, այլ ոչ հաջորդաբար,
- անկախ մարմինը գնահատում է պետական կողմի նպատակները եւ գնային առաջարկները՝ կողմերի նախահամաձայնեցված սկզբունքներով,
- սահմանվում են պայմանագիրը վերանայելու կամ ճշգրտելու պայմանները,
- պետական ռեսուրսների մատակարարը եւ արդյունքը ստացողը պետք է լինեն առանձին մարմիններ,
- պետական մասնաբաժնով ընկերությունների նկատմամբ ընտրողական վերաբերմունքի բացառման մասին համաձայնություն:

Առաջացող խնդիրների երկրորդ խումբը կապված է ծախսերի պլանավորման հետ: Ցանկալի չէ, որ կառավարությունը կանխորոշի մասնավոր հատվածի ծախսերի սահմանները: Կնքվող համաձայնագրերի իրականացումը ցանկալի է ենթարկել շարունակական մոնիտորինգի, անկախ մարմնի կողմից: Քանի որ սկզբնապես պետությունն ունի ինքնիշխանության կարգավիճակ, ՊՄՀ-ում կողմերի իրավահավասարության մասին հնարավոր է խոսել միայն, երբ ՊՄՀ համաձայնագրում սահմանված են իրավաքաղաքացիական եւ իրավահանրային հարաբերությունների առանձնահատկություններն ու իրագործման պայմանները:

Համաձայնագիրը պետք է ներառի կատարողականի չկատարման տույժերի չափը, դրանց կիրառման ընթացակարգը: Համագործակցությունները ավելի հաջողված են, երբ մշակված ծրագրավորումը համատեղում են ընթացքում համաձայնեցվող ծրագրավորման հետ:

ՊՄՀ-ները ծառայում են հասարակությանը եւ ենթակա չեն ավանդական շուկայական կարգապահության, այս պայմաններում էական կարեւորություն ունի հասարակությանը հաշվետու լինելը: ՊՄՀ-ների հաշվետվողությունը ներառում է թափանցիկություն, պատասխանատվություն եւ արձագանքման կարողություն: Թափանցիկությունը պահանջում է, որ ՊՄՀ-ներին առնչվող հիմնական որոշումները բաց լինեն հասարակության վերահսկման առջեւ, պատասխանատվությունը՝ որ որոշումների կայացման իշխանությունը հստակ հասցեատեր ունենա, իսկ արձագանքման կարողությունը՝ որ քաղաքացիներն ազդեցություն ունենան ՊՄՀ-ների գործունեության վրա, եւ հաճախորդների արձագանքներին պատշաճ կերպով տրվեն պատասխաններ⁶:

Հայաստանում պետական-մասնավոր համագործակցության մեխանիզմով իրականացվող ծրագրերը նորություն չեն եւ գործում են ՊՄՀ գրեթե բոլոր մոդելներով: Ավելին՝ միջազգային գնահատականներով, մեր երկիրն այս առումով ԱՊՀ առաջատարների շարքում է: ՊՄՀ շրջանակներում են գործում

երեւանի օդանավակայանը, ջրմուղ համակարգը, Հայաստանի երկաթուղային ցանցը, փոստային ծառայությունը, էներգետիկ ձեռնարկությունները եւ այլն: Հայաստանում ծառայությունների ոլորտում ՊՄՀ որեւէ ծրագիր չի ձախողվել եւ չէղյալ համարվել: Հայաստանի տնտեսությունը կարիք է գզում ենթակառուցվածքների արդիականացման, կառավարման բնագավառում նոր մոտեցումների ներդրման, հանրային ծառայությունների որակի բարձրացման: Ֆինանսական միջոցների սղության եւ նոր հմտությունների կարիքի պայմաններում ՊՄՀ-ները դիտվում են պակասը լրացնելու առավել նախընտրելի տարբերակ: 2008-ին կառավարությունը, միջազգային գործընկերների հետ համատեղ, պատրաստեց պետական-մասնավոր համագործակցության հայեցակարգ, մշակվում է համապատասխան օրենքի նախագիծ եւ ստեղծման ընթացքում է ոլորտը համակարգող մարմինը: Կառավարությունը ցանկանում է ենթակառուցվածքային ծրագրերում տեղական իշխանությունների ներգրավման միջոցով զարգացնել նաեւ այդ հաստատությունների կարողությունները, նախանշել բարենպաստ բիզնես միջավայրը՝ ՊՄՀ-ների վրա հիմնված ենթակառուցվածքային ծրագրերը կախման մեջ դնելով տեղական իշխանությունների կողմից ձեռնարկատիրության համար նպաստավոր եւ թափանցիկ որոշումների կայացումից ու կառավարման գործելաճից: Այսպիսով՝ ՊՄՀ-ների արդյունավետությունը կախված է Հայաստանում տնտեսական եւ ինստիտուցիոնալ բարեփոխումների ընդհանուր առաջընթացից⁷:

ՊՄՀ-ի հաջող իրագործման ընթացքում ստեղծվում է կոնսենսուսի մշակույթ, որը թույլ է տալիս երկխոսություն վարել գործընկերության եղանակների եւ արդյունքների վերաբերյալ՝ առանց խախտելու կողմերին վերապահված լիազորությունների շրջանակը: Դրական արդյունքներն են գործընկերության զարգացող մարդկային կապիտալը, ընթացակարգային արդյունավետության աստիճանական բարձրացումը, նորարարական մոտեցումների պահանջվածությունը, կողմերին տեղեկատվության հասանելիությունը, ավելի արդյունավետ արտադրանքն ու ծառայությունները, հանրության շրջանում կողմերի վարկի ու հեղինակության բարձրացումը, շահագրգիռ խմբերի մոտ վստահության մեծացումը, մասնավոր հատվածում մրցակցության խրախուսումը եւ որպես հետեւանք՝ բյուրոկրատական մշակույթի նվազումը:

ՊՄՀ-ն փոփոխություններ է մտցնում պետական կառավարման համակարգում: Նոր խնդիրներ են առաջանում պետական պաշտոնյաների աշխատանքում: Նրանք պետք է ունենան բիզնեսի վարման գիտելիք, կարողանան բացահայտել բիզնեսի ներգրավման նոր հնարավորություններ իրենց ոլորտներում, փոխեն ավանդական մտածելակերպը: Կառավարման համակարգը վերակառուցվում է՝ հաշվի առնելով ուղղությունը դեպի փոխգործակցություն, որի ընդհանրական նպատակն է արդեն հանրային կառավարման ողջ համակարգի մրցունակության ու արդյունավետության բարձրացումը: ՊՄՀ-ների հաջողությունը կախված է քաղաքական կայունությունից, ինստիտուցիոնալ, վարչարարական, ֆինանսական, սոցիալական կարողությունների համատեղումից:

Թեեւ գրականության մեջ պետական-մասնավոր համագործակցությունը հիմնականում ներկայացվում է դրական նկարագրմամբ, սակայն ուսումնասիրողները գերծ չեն նաեւ բննադատական մոտեցումներից: Նմանատիպ մոտեցում իրենց աշխատանքներում ունեն Բովիարդը, Ռոսենաուն, Դիքսոնը, Ֆարանազը եւ այլք⁸: Ըստ նշված հեղինակների՝ մասնավոր-պետական համագործակցության դեպքում չեն կրճատվում, այլ միայն փոխակերպվում են կառավարության կարգավորիչ եւ վերահսկիչ գործառնությունները, չեն բարձրանում պետական կառույցների աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, ավելին՝ մեծանում են կոռուպցիոն ռիսկերը, իսկ պետական ծախսերը կրճատվում են միայն սկզբնական շրջանում:

Հայաստանյան իրականության մեջ պետական-մասնավոր համագործակցության հիմնական խնդիրները եւ մարտահրավերները ընդհանրական ձեւով կարելի է խմբավորել երկու խմբում: Առաջին խմբում երկրի տնտեսական զարգացման մակարդակից բխող հիմնահարցերն են: Երկրորդ խմբի խնդիրները կապված են կողմերի պատրաստվածության եւ փոխգործակցությանը հակվածության հետ:

Առաջին խմբի խնդիրներից առանձնացնենք հետեւյալը:

Պետական և մասնավոր ձեռնարկատիրության սահմանները հստակ սահմանված չեն, արդյունքում՝ ձեռնարկատիրական գործունեության այն տեսակներով, որոնցով կարող են զբաղվել մասնավոր կառույցները, զբաղվում է պետությունը՝ հիմնականում անարդյունավետ:

Խնդիր են ծրագրերի ֆինանսական աղբյուրների դժվար հասանելիությունը, մատչելիությունը, վարկատու մարմինների բարձր տոկոսադրույքները հատկապես՝ տեղական գործարարների համար:

Անբավարար են համապատասխան իրավական, կազմակերպական և տեղեկատվական պայմանները: Խանգարող գործոն են նաև կոռուպցիայի բարձր և թափանցիկության ցածր մակարդակը:

Հետագա զարգացման տեսակետից հիմնախնդիր է «խորքային» պայմանագրերի սակավությունը, որոնք պահանջում են մասնավորի կողմից ներդրումներ և ժամանակ՝ դրանց վերադարձի համար: Բիզնես խմբերը նախընտրում են գործընկերային հարաբերություններն այնպիսի ծրագրերում, որոնք ունեն ուղղակի արդյունք: Գործընկերությունները ծառայությունների մատուցման ոլորտում ավելի հաճախակի են պահանջված են, քան այնպիսիք, որ առնչվում են գործակցող համակարգերում կամ դրանցից մեկում փոփոխություններին: Հիմնականում հանդիպում ենք կառավարման կամ վարձակալության ՊՄՅ-ների:

ՊՄՅ հայեցակարգը ոլորտի համար խնդիր է համարում ևս: Են գնումների կարգավորման բնագավառում անբավարար մակարդակը: Ընդհանուր առմամբ՝ պետք է արժանին մատուցել գնումների պետական համակարգին՝ նշանակալի թվով ՊՄՅ-ներ հաստատելու և պայմանագրային բարդ խնդիրներ լուծելու կարողության համար: Այնուամենայնիվ՝ համակարգը չի ապահովում, «փողի դիմաց արժեք», իսկ համակարգի կարողությունները ետ են մնում զանգվածաբար հաջող ՊՄՅ պայմանագրեր կնքելու՝ երկրում առկա կարիքներից⁹:

Արտաքին ներդրողներին ուղղված ՊՄՅ ռազմավարությունը մեծացնում է ռիսկերը ծրագրերում կապված քաղաքական անվստահության և փոխարժեքային տատանումների հետ:

Երկրորդ խմբում առանձնանում են հետեյալ խնդիրները: Փորձի և համակարգված կառավարման պակասը: Հաճախ ՊՄՅ եղանակը իրագործվում է որպես իրավիճակային լուծում և կառավարությունը հետամուտ չի լինում ցանկալի արդյունքի հասնելուն:

Խնդիր է կողմերի, հատկապես՝ պետական մարմիններում համագործակցության իրական ցանկության անբավարար մակարդակը և երկխոսության անպատրաստ լինելը, ինչպես ևս: Երկու կողմից վստահության բացակայությունը, նման մշակույթի բացակայությունը: Անձնակազմի վերապատրաստումը, տվյալների փոխանակման համակարգի ստեղծումը, աշխատանքների համաձայնեցումը ներդրումներ և ջանքեր են պահանջում: Կառույցները տարբերվում են աշխատանքային մշակույթով, վարձատրության և առաջխաղացման համակարգերով: Սա հավանական է դարձնում ներքին դիմադրությունը, ինչպես նաև բախումները կազմակերպությունների ներսում և դրանց միջև:

Ազդեցության մեծ անհամաչափություններն ազդում են գործընկերության ընթացքի վրա, ինչը կարող է ծնել թույլ կողմի կրավորական վարք: Խորհուրդ է տրվում հնարավորինս հավասարակշռել ազդեցության չափերը:

Կազմակերպչական խնդիր է նշված բյուջետային գործընթացը գերազանցող պարտավորություններ ստանձնելու օրենսդրական սահմանափակումը կառավարության համար: Կառավարությունը չի կարող ստանձնել պարտավորություն՝ որքան մասնավոր ընկերության հաշվին կատարելու վճարումներ, որոնք կծախեն ավելի երկար ժամկետով, քան բյուջետային գործընթացի տեղույթյամբ թույլատրվածը, և ի հետևանք՝ գործնականում բոլոր երկարաժամկետ ՊՄՅ-ները Հայաստանում կոնցեսիոն տիպի են, այսինքն՝ երբ ծրագրերն իրականացնող ընկերությունները զանձումներ են կատարում հաճախորդներից¹⁰:

Այս խնդիրների մի մասի լուծումը հնարավոր է պետական-մասնավոր համագործակցության մասին օրենքի ընդունումից և համապատասխան պետական մարմնի հիմնումից հետո: Ներկայում պատրաստվում է օրենքի նախագիծը, որով ծրագր-

ված է ևս: միջազգային գործընկերների օժանդակությամբ՝ ՀՀ Ելնոմիկայի նախարարությանը կից ստեղծել ՊՄՅ համակարգման գործակալություն:

Մինչև օրս ՊՄՅ-ների օրենսդրական կարգավորման հիմնական իրավական ակտ էր 2002թ. Ազգային ժողովի ընդունած՝ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու մասին» ՀՀ օրենքը: Այն հնարավորություն չէր տալիս լիարժեք գործածել ՊՄՅ մեխանիզմը նույնիսկ սեփական կարգավորման ոլորտում:

ՊՄՅ-ների մասին օրենքը համապատասխան համակարգող մարմնի միջոցով նախ կսահմանի գործընթացի միասնականություն: Դա կլինայի ժամանակը, գործառնական ծախսերը, կիստակեցի բաշխման և վերահսկողական գործառնությունները և ամբողջ գործընթացը կդարձնի ավելի թափանցիկ ու համապարփակ: ՊՄՅ համակարգող մարմնի ստեղծումը ևս: Իհարավոր ներդրողներին հնարավորություն կտա ամբողջական տեղեկատվություն ստանալ մշակվող ծրագրերի մասին, համեմատել ծրագրերն ըստ ճյուղերի, տեղակեցի, ռիսկերի և այլն:

Համարվում է, որ Արեւմտյան Եվրոպայում պետական-մասնավոր գործընկերության իրավական մեխանիզմների մշակումն ամբողջացավ շուրջ քսանհինգ տարվա ընթացքում: Միջազգային կառույցները, որպես կանոն, խրախուսում են իրականացնել ավելի ճկուն օրենսդրական կարգավորումներ և սահմանափակվել կոնցեսիաների մասին հատուկ օրենքներով:

Հեղինակի կարծիքով՝ ռիսկերի նվազեցման ուղղությամբ պետությունը կարող է օգտագործել մի շարք մեխանիզմներ, մասնավորապես.

- Պայմանագրային հիմքերով երաշխավորել մասնավոր ներդրումների վերադարձելիությունը, ինչն ընդունված է ՊՄՅ-ների դեպքում: Դա ստեղծում է վստահության և կայունության մթնոլորտ, որ անհրաժեշտ է բիզնես-պետություն միջակտորիալ փոխգործակցության բազմակողմանի զարգացման համար:

- Համաֆինանսավորել ՊՄՅ ծրագրերը՝ ուղղակի բյուջետային ներդրումների եղանակով և ամրագրել իր պայմանագրային պարտավորությունները՝ որպես պետական պարտքի տարատեսակ:

- Բանակցել միջազգային օժանդակող կառույցների հետ, որ վերջիններս բանկերին տրամադրեն արտույալ վարկեր՝ ՊՄՅ ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Վերջին կետի դեպքում մեծանում են տեղական գործարար հատվածի ներգրավման հնարավորությունները: Տեղական կապիտալը հստակ պայմանագրերի և ՊՄՅ-ների նկատմամբ հանրային բեռնվածության պայմաններում հնարավորություն է ստանում իրականացնել երկարաժամկետ ներդրումներ: ՊՄՅ-ները տնտեսության այն ոլորտն են, ուր տեղական բիզնեսի ներգրավումը և հաջողումը կարող են ցույց տալ պետության հետ փոխգործակցության ուղի:

Ցանկալի է հնարավորությունն ընձեռնել կողմերին, այդ թվում՝ տեղական գործարարներին, լուծել պայմանագրային վեճերը միջազգային միջնորդ դատարանում, ինչը կբարձրացնի կողմերի վստահությունը և պատասխանատվությունը:

1. Gerrard M.B.,... What are public-private partnerships, and how do they differ from privatizations?, *Finance & Development*, 2001, Vol. 38, #3.
2. M.J. Joseph, P.J. Gandhi, *Public-Private Partnership in National Building in India*, 2005.
3. Поровская А.Я., *Теоретические основы частно-государственного партнёрства на современном этапе развития экономики России*, Вестник Томского Государственного Университета, Июль 2008, с. 148.
4. *Privatisation & Public Private Partnership Review 2007/08*, Euromoney Institutional Investor.
5. Шарингер А., *Новая модель инвестиционного партнёрства государства и частного сектора*, Мир перемен, 2004, #2, с. 13.
6. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում պետական-մասնավոր հատվածների համագործակցության մասին, Երևան 2008, էջ 10.
7. Նույն տեղում, էջ 6.
8. Bovard T., *Public-Private Partnerships: from Contested Concepts to Prevalent Practice*, *International Review of Administrative Sciences*, Vol. 70, #2; Rosenau P., *The Strengths and Weaknesses of Public-Private Policy Partnerships*, *American Behavioral Scientist*, Vol. 43, #1.
9. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում պետական-մասնավոր հատվածների համագործակցության մասին, էջ 34.
10. Նույն տեղում, էջ 30.